ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2026 թվականի N 1259-Ն

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ, ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ, ԵՐՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՇՆՈՐՀՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՎԱՍՏՈՂ ԴԻՊԼՈՄՆԵՐԻՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՄԱՏԵՂ ԿԱՄ ԿՐԿՆԱԿԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ) ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և 13-րդ հոդվածի 5-րդ մասով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) բարձրագույն կրթության երրորդ մակարդակում ուսումնառության կազմակերպման, ներառյալ ընդունելության ընդհանրական պայմանները և ուսումնառության կազմակերպման ընդհանուր պահանջները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) գիտական աստիճանի շնորհման կարգը, չափանիշներն ու ընթացակարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) բարձրագույն կրթության երրորդ մակարդակի կրթական ծրագրերով շնորհվող որակավորումները հավաստող դիպլոմներին (այդ թվում՝ համատեղ կամ կրկնակի որակավորման) և հավելվածին ներկայացվող պահանջները՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 26-ի «Ասպիրանտուրայի դիմորդների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևը և բարձրագույն ու հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետների աշխատանքի տեղավորման կարգը հաստատելու մասին» N 581-Ն որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 662 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 238-Ն որոշման 2-րդ կետից հանել «՝ բացառությամբ որոշմամբ հաստատված կարգի 6-րդ և 7-րդ կետերի» բառերը:

4. 2031 թվականի դեկտեմբերի 25-ից ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» N 327 որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 662 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 238-Ն որոշումը:

5. Սույն որոշման հավելվածներով հաստատված կարգավորումները գործում են 2027/2028 ուսումնական տարվանից ընդունված դոկտորանտների համար:

6. Սույն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 65-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված ՄԳԾ հրապարակումների մասով կարգավորումները հայագիտություն և հումանիտար, հասարակական, ռազմական գիտությունների մասնագիտությունների դեպքում կիրառվում են հետևյալ ժամանակահատվածներում՝

1) 65-րդ կետի 1-ին ենթակետի դեպքում՝ մինչև 2030 թվականը՝ գիտական ղեկավարն ունի տվյալ մասնագիտությամբ առնվազն 2 ՄԳԾ հրապարակում, իսկ 2030 թվականից՝ հայագիտություն և հումանիտար, ռազմական գիտությունների մասնագիտությունների դեպքում՝ առնվազն 5 ՄԳԾ հրապարակում (առնվազն չորսը տվյալ մասնագիտությամբ), իսկ հասարակական գիտությունների մասնագիտությունների դեպքում՝ առնվազն 10 ՄԳԾ հրապարակում (առնվազն չորսը տվյալ մասնագիտությամբ).

2) 65-րդ կետի 2-րդ ենթակետի դեպքում՝ մինչև 2030 թվականը՝ գիտական ղեկավարը վերջին հինգ տարիների ընթացքում ունի առնվազն 2 ՄԳԾ հրապարակում, իսկ 2030 թվականից՝ հայագիտություն և հումանիտար, ռազմական գիտությունների մասնագիտությունների դեպքում՝ առնվազն 4 ՄԳԾ հրապարակում (որոնցից առնվազն երկուսում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ, ինչպես նաև առնվազն երկուսը պետք է հանդիսանան առնվազն երկրորդ քառորդում (Q2) ներառված ամսագրում հրապարակված գիտական հոդվածներ), իսկ հասարակական գիտությունների մասնագիտությունների դեպքում՝ առնվազն 8 ՄԳԾ հրապարակում (որոնցից առնվազն չորսում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ, ինչպես նաև առնվազն չորսը պետք է հանդիսանան առնվազն երկրորդ քառորդում (Q2) ներառված ամսագրում հրապարակված գիտական հոդվածներ):

7. Սույն որոշման N 2 հավելվածով հաստատված կարգի 19-րդ կետով սահմանված ՄԳԾ հրապարակումների մասով կարգավորումները հայագիտություն և հումանիտար, հասարակական, ռազմական գիտությունների մասնագիտությունների դեպքում կիրառվում են հետևյալ ժամանակահատվածներում՝ մինչև 2030 թվականը՝ առնվազն 5 ՄԳԾ հրապարակում, որոնցում բուհը նշված է որպես

հեղինակի աշխատանքի վայր, իսկ 2030 թվականից՝ հայագիտություն և հումանիտար, ռազմական գիտությունների մասնագիտությունների դեպքում՝ առնվազն 10 ՄԳԾ հրապարակում, որոնցում բուհը նշված է որպես հեղինակի աշխատանքի վայր, իսկ հասարակական գիտությունների մասնագիտությունների դեպքում՝ առնվազն 20 ՄԳԾ հրապարակում, որոնցում բուհը նշված է որպես հեղինակի աշխատանքի վայր:

8. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝

1) մինչև 2026 թվականի հոկտեմբերի 30-ը հաստատել գիտական աստիճանի դիպլոմի, այդ թվում՝ համատեղ դիպլոմի և դիպլոմի հավելվածի ձևանմուշի, դրանց լրացման, պատվիրման, բաշխման, հաշվառման, գրանցման և պահպանման կարգով սահմանված թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դիպլոմների թվայնացման ժամանակացույցը.

2) թվային դիպլոմների տրամադրումն իրականացնել 1994 թվականի մարտի 10-ից սահմանված կարգով գիտության թեկնածուի կամ գիտության դոկտորի գիտական աստիճան ստացած կամ ստացող անձանց համար, ներառյալ սույն որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետի որոշման կարգավորումների շրջանակներում ընդունված և պաշտպանած ու թղթային տարբերակով դիպլոմ ստացած դոկտորանտների համար.

3) հաստատել թղթային տարբերակներով տրամադրված թեկնածուական և դոկտորական դիպլոմների թվայնացման նախահաշիվը՝ անհրաժեշտ միջոցները հատկացնելով պետական բյուջեի «1162. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի «11019. Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում» միջոցառման ֆինանսական միջոցներից, աշխատանքներն ավարտել մինչև 2027 թվականի նոյեմբերի 20-ը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ